ՊԵԴԻԿՈՒԼՅՈԶԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾՆՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ:
Պեդիկուլյոզը վերահսկելու հեշտ քայլեր

Ի՞նչ է պեդիկուլյոզը (գլխի ոջիլը):

Գլխի ոջիլները փոքր միջատներ են, որոնք ապրում են մարդկանց մազերի մեջ և սնվում են նրանց արյամբ: Ոջիլները սոսնձում են իրենց ձվերը մազերին, որոնք նաև կոչվում են անիծներ:

Գլխի ոջիլներն առանց սնվելու արագ մահանում են (երկու օրվա ընթացքում), այնպես որ նրանք Ձեր երեխայի գլխից հեռու լինելով երկար չեն կարող ապրել:

Անիծներից վեցից ինը օր է պահանջվում ձվադրման համար, իսկ ոջիլներից՝ յոթ և ավելի օր ձվից ծնվող հասուն միջատ դառնալու համար:

Պեդիկուլյոզի զարգացումը



Ինչպե՞ս են մարդիկ պեդիկուլյոզ ձեռք բերում:

Երեխաները կարող են գլխի ոջիլը այլ երեխաներին փոխանցել գլխից գլուխ շփումից և երբեմն այն ժամանակ, երբ նրանք միասին օգտագործում են միևնույն սանրը, գլխարկը, հագուստը, հերակալը, սաղավարտը, շարֆը, ականջակալները կամ այլ անձնական իրեր:

Գլխի ոջիլը խնդիր է տներում, ցերեկային խնամքի կենտրոններում, տարրական և նախադպրոցական հաստատություններում: Առավել հավանական է, որ երեխաները ոջիլ ձեռք բերեն ընտանիքի անդամներից և խաղընկերներից, քան դպրոցում՝ դասընկերներից:

Ինչպե՞ս պետք է իմանամ, արդյոք իմ երեխան ոջիլ ունի:

Միակ միջոցը, որպեսզի իմանաք, թե արդյոք Ձեր երեխան ոջիլ ունի՝ նրա գլուխը զննելն է: Հասուն միջատները և հարսնյակները առավել դժվար է տեսնել, քան անիծները, որոնք սովորաբար գլխամաշկից ¼ մատնաչափ հեռավորության վրա են գտնվում:

Ինչպե՞ս կարող եմ ձերբազատվել իմ երեխայի ոջիլներից:

<u>Սանրելով մաքրել և հեռացնել</u>

Եթե Ձեր երեխան գլխի ոջիլ ունի, ոջիլից ձերբազատվելու լավագույն միջոցը նրա գլուխը երկու շաբաթ, ամեն օր անիծները մաքրելու սանրով սանրելն է:

Անիծները մաքրելու սանրը պետք է մետաղյա լինի (ոչ պլաստմասե) և պետք է երկար ատամներ ունենա: Անիծները մաքրելու սանրերի մի շարք ապրանքանիշեր առկա են Ձեր տեղական դեղատներում:

Լավագույն օրինակը՝ LiceMeister®* մետաղյա սանրն է, որը արժե մոտավորապես 10 դոլար: Լուի մետաղյա սանրերը, որոնք կարել է գտնել ընտանի կենդանիների խանութներում, նույնպես կարելի է օգտագործել:

Անիծները մաքրելու լավագույն միջոցը՝ մազերը փոքր հատվածների բաժանելն է: Սանրեք արմատներից մինչև մազերի ծայրը: Յուրաքանչյուր հատված սանրելուց հետո ամրացրեք մազերը գլխամաշկին, որպեսզի չկորցնեք սանրված հատվածը: Եթե ոջիլ եք գտնում, մաքրեք կամ լվացեք սանրը՝ նախքան կրկին օգտագործելը: Առավել հեշտ է խոնավ մազերը սանրելը:

Անիծները, որոնք հնարավոր չէ սանրելով մաքրել, պետք է հեռացվեն: Դուք դա կարող եք անել մատների եղունգներով նրանց բռնելով կամ կտրելով առանձին մազը գլխամաշկի և այն հատվածի միջև, որտեղ անիծները կպած են: Ընտանիքի բոլոր անդամների մազերն ամբողջությամբ ստուգեք: Ընդհանուր հատվածները, որտեղ կարող եք ոջիլ գտնել մոտ են գլխամաշկին, պարանոցի հատվածին, և ականջների ետևի հատվածին:

Անիծները, որոնք հնարավոր չէ սանրելով մաքրել, պետք է հեռացվեն: Դուք դա կարող եք անել մատների եղունգներով նրանց բռնելով կամ կտրելով առանձին մազը գլխամաշկի և այն հատվածի միջև, որտեղ անիծները կպած են:

Բուժման տարբերակներ

Permethrin (Nix®*)-ը կամ pyrethrin-ը ակտիվ բաղադրիչներն են գլխի ոջիլի՝ առանց դեղատոմսի բուժման շատ դեպքերում: Բենզիլ սպիրտի լոսյոնը (5%), ինչպես օրինակ՝ Ulesfia®* -ը կարող է նշանակվել 6 ամսական և ավելի մեծ երեխաների ոջիլները սպանելու համար:

Ivermectin (0.5%)-ով բուժումը, ինչպես օրինակ՝ Sklice®-ը, կարող է նշանակվել 6 ամսական և ավելի մեծ երեխաների ոջիլները սպանելու համար:

Spinosad (0.9%)-ով բուժումը, ինչպես օրինակ՝ Natroba®*-ը, կարող է նշանակվել 4 տարեկանից բարձր երեխաների ոջիլները սպանելու համար:

AirAllé®*-ն մի սարք է, որն ինտենսիվ հոսքով տաք օդ մղելով դեպի գլխամաշկ, սպանում է ոջիլներին և անիծներին:

ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՈՒԺՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Ուշադիր հետևեք պիտակի վրայի ցուցումներին:
- Բուժեք միայն այն մարդկանց, ովքեր պեդիկուլյոզ ունեն:
- Արտադրանքը մի թողեք նույն տեղում ավելի երկար ժամանակ, քան խորհուրդ է տրվում, այն ոջիլին ավելի արագ չի սպանի:
- Պեդիկուլյոզ ունեցող յուրաքանչյուր մարդ կարիք ունի ամբողջական բուժման:
- Մի կիսեք մեկ տուփ շամպունը կամ մազերի քսուքը մարդկանց միջև:
- Նույնիսկ բուժումից հետո, Դուք պետք է ամեն օր հեռացնեք անիծները անիծի կամ լուի մետաղյա սանրով, մինչև որ բոլոր անիծներն ամբողջովին հեռացվեն:
- Սպասեք առնվազն յոթից տասը օր՝ նախքան ինչ-որ մեկին երկրորդ անգամ բուժելը, եթե նա դեռևս ոջիլ ունի: Այս յոթից տասը օրվա ժամկետում շարունակեք հեռացնել հայտնաբերված ցանկացած անիծ և ոջիլ:

Ի՞նչ անել, եթե բուժումն արդյունք չտա:

Ահա մի քանի պատճառներ, որոնց դեպքում բուժումը կարող է արդյունք չտալ:

- Բուժական միջոցի վրա առկա ցուցումներին լրջորեն չեն հետևել:
- Անիծները լիովին չեն հեռացվել:
- Երեխան կրկին պեդիկուլյոզ է ձեռք բերել խաղընկերոջից:
- Ոջիլը չի կարող անմիջապես սատկել:
- Խնդիրը ոջիլը չի եղել:

Ոչ մի հիմնավորում չկա, որ հետևյալ արտադրանքները արդյունք են տալիս՝

- Քացախ
- Բաղադրիչները, որոնք ասում են, որ քայքայում են անիծների կպչունությունը, որպեսզի «հեշտացնեն դրանց հեռացումը»:
- Մայոնեզը
- Ձիթապտղի յուղը
- Թեյի ծառի յուղը

Ահա մի քանի այլ միջոցներ, որոնցով Դուք կարող եք տան պայմաններում ձերբազատվել ոջիլից կամ անիծից:

- Լվացեք հագուստը և անկողնային պարագաները տաք ջրով (130F), այնուհետև չորացրեք տաք շրջապտույտով՝ առնվազն 20 րոպե:
- Իրերը մեկուսացրեք պոլիէթիլենային տոպրակներում երկու շաբաթ, որպեսզի սպանեք ոջիլներին՝ կանխելով նրանց արյան պաշար գտնելը:
- Հինգ րոպե ջրում եռացրեք սանրերը, խոզանակները, մազակալները և հերակալները, կամ դրանք մեկ ժամ պահեք բժշկական սպիրտի կամ Lysol®*-ի մեջ: Փոշեկուլով մաքրեք գորգերը և կահույքը:

*Այս արտադրանքի անվանման օգտագործումը առևտրային աջակցություն չի ենթադրում Կալիֆորնիայի Հանրային առողջապահական բաժնի կողմից:

Ձվի իրական չափը (անիծ), հասնյակը և հասուն պեդիկուլյոզը (գլխի ոջիլ) համեմատվում է մեկ ցենտի հետ:

Հասնյակ, Մազ, Ձու, Հասուն միջատ

Եթե հարցեր ունեք, դիմեք Ձեր տեղական առողջապահական բաժին կամ կլինիկա:

Կալիֆորնիայի հանրային առողջապահության վարչություն

Վարակիչ հիվանդությունների բաժին

(916) 552-9730
www.cdph.ca.gov
2016